ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.05.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/114

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Երքաղլույս» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ

Ա.Մինասյանի (լիազորագիր՝ տրված 07.05.2021թ.),

Ա.Անանյանի (լիազորագիր՝ տրված 07.05.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.05.2021թ. թիվ 26/26-1/6757-2021 գրությամբ «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Երքաղլույս» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 23.04.2021թ. թիվ 68/554 գրության հիման վրա 03.05.2021թ. թիվ 26/26-1/6757-2021 գրությամբ նախաձեռնել է «Շավադուն» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 07.05.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Շավադուն ընկերության կողմից առաջարկած ապրանքատեսակը եվրոպական չափանիշներին համապատասխանող ամենաբարձր որակի ապրանքներից մեկն է, որն այժմ օգտագործվում է շատ երկրներում, այդ թվում՝ Վրաստանում, որը Հայաստանի հարևան երկրներից է:

Այս ապրանքի մեջ օգտագործվում են գերմանական Ֆիլիփս ընկերության LED- ները՝ ամենաբարձր որակի դրայվրների հետ աշխարհի վերջին չափանիշներով և հնարավորինս ամենաբարձր որակով: Քանի որ այս ընկերության համար հատուկ նշանակություն ունի ապրանքի որակը, օգտագործման երկարաժամկետությունը և ավելի վառ լուսավորություն ապահովել , այսդ իսկ պատճառով այս ապրանքատեսականին է սպառողին ներկայացվել:

Նշենք նաև, որ մեր ընկերությունը մասնակցել է Եվրոպական զարգացման բանկի մրցույթներից մեկին, որը տեղի է ունեցել Հայաստանի՝ Գյումրի քաղաքում ներկայացնելով նույն ապրանքատեսականին, որը չունենալով որևէ խնդիր հաստատվել է Եվրոպական զարգացման բանկի և Գյումրի քաղաքապետարանի տեխնիկական անձնակազմի կողմից: Միայն գնի առումով մի փոքր ինչ տարբերությամբ զբաղեցրեցինք երկրորդ տեղը:

Անրադարձած խնդիրներից մեկը որը հանդիպման ընթացքում նշվեց այն էր , որ լույսերը պետք է լինեին օվալաձև, մինչդեռ հայաստանյան շուկայում լույսերի գրեթե 99% -ը ուղղանկյուն են, և այս ընկերության կողմից առաջարկվող արտադրանքը գրեթե այն տեսքին մոտիկ՝ սեղանաձև տարբերակն է: Ապրանքատեսակը երբ տեղադրվում է բարձրության վրա, ապահովում է օվալաձև տպավորություն, որը լիովին բավարարում է Ձեր պահանջներին:

Մեկ այլ խնդիր էր շառավղի չափը, որտեղ լույսերը տեղադրվում էին լուսամփոփի ձողերի վրա: Առաջարկած LED ճանարարհային լույսերի համար օգտագործվող ձողը (կախված 50w, 100w, 150w, lights լուսատուների տեսակից) սովորաբար տեղադրման

խնդիր չունի Ձեր տրամադրած չափսերին: Մենք կարծում ենք, որ Դուք պատրաստվում էիք օգտագործել առկա եղած հին ձողերը այդ իսկ պատճառով մենք փոքր և ամուր ադապտոր, խնդիրը լուծելու համար: (Ներկայումս այս ադապտորները օգտագործվում են այն դեպքում երբ օգտագործվում է հին ձողերը): Կամ տեխնիկապես առաջարկվում է, որ գոյություն ունեցող ձողերը փոխել ժամանակակից ձողերով:

Եվ մեկ այլ հարց, որը բարձրացվել էր հանդիպման ընթացքում, LED- ը պետք է ունենա բավարար դիմադրություն -40-ից +40 ջերմաստիճանի սահմաններում, նշենք , որ մեր ապրանքատեսականին այս առումով խնդիր չունի և ունի բավարար դիմադրություն պահանջվող ջերմաստիճանում: Հանդիպման ընթացքում բանավոր ներկայացվեց , որ սովորաբար շոգ եղանակը և բարձր ջերմաստիճանը չի վնասում LED- ներին: Գազային հին լամպեր են, որոնք հնարավոր է ցրտի կամ բարձր ջերմաստիճանի դեպքում լամպի մեջ գազի խտացման կամ ընդլայնման պատճառով չաշխատի: Դրանք փչանում են, մինչդեռ LED լամպերի մեջ նման խնդիր չկա, և այս ապրանքը համատեղելի է ձեր պահանջած պայմաններին: Այս ընկերությունը 5 տարի շարունակ երաշխավորում է այս ապրանքի աշխատանքը 70,000 ժամ տևողությամբ:

Հաշվի առնելով ապրանքի գների համեմատությունը, հարկ է նշել, որ Շավադոն ընկերության առաջարկվող գները ըստ տրամադրված տեխնիկական (քիչ էներգիա խնայող, ավելի վառ՝ լուսավորում ապահովող, IP66 և այլն) բարձր որակի է, որը համեմատած սովորական LED- ների (2-րդ և 3-րդ աստիճան) ներկայացված է մատչելի, ըստ որի ի համեմատելի չէ շուկայում առկա սովորական ապրանքներին: Այդ իսկ պատճառով Ձեզ առաջարկում ենք Հայաստանի լուսամփոփի որակը բարձրացնելու և տեխնիկական ստուգումներ անցկացնելու նպատակով այցելել ապրանքատեսականին արտադրող գործարան, որակի առումով ավելի լավ որոշում կայացնելու համար:

Նշենք, որ «Շավադոն» ընկերությունը, որը 50 տարի պատմություն ունի Իրանում իրականացնում է նմանատիպ նախագծեր (տեղադրում և իրականացում) ինչպես նաև արդյունաբերական ոլորտի տարբեր նախագծեր և այլն, մենք ցանկանում ենք ներդրումներ կատարել նաև Հայաստանում. աշխատանքային տարիների փորձից ելնելով այս որակյալ արտադրանքը ներկայացվել է Ձեզ և ոչ մի խախտում կատարելու մտադրություն չկար»:

«Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/114 ընթացակարգի շրջանակներում 10.05.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երքաղլույս» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.02.2021թ. թիվ 01/61-4013 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղը, այսուհետ՝ Մասնակից (ՀՀ, ք.Երևան, Մամիկոնյանց փող. Թիվ 21 շենք թիվ 2/1, հեռ. 094-80-15-01, էլ. Փոստ info@shavadoon.co):

Ընթացակարգի շրջանակներում Գնահատող հանձնաժողովի որոշմամբ արձանագրվել է, որ Մասնակցի հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքներով, 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերում առկա են հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ:

Ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջով գնահատող հանձնաժողովը Մասնակցին ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ըստ որի ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերիի ամբողջական պահանջներին:

Ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի դրույթներով Գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնի մասով մերժել Մասնակցի կողմից ներկայացված հայտը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/114 ընթացակարգի շրջանակներում 10.05.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/114 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/114 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար լուսատեխնիկական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը info@shavadoon.co էլ. փոստի միջոցով 15.04.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ բանակցությունների անցկացման համար ծանուցվել է նաև «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչը:

6. Նույն արձանագրության 1.1 ենթակետի համաձայն՝ «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցչի կողմից գնային առաջարկները թողնվել են անփոփոխ:

7. Նույն արձանագրության 3.1 ենթակետի համաձայն՝ «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի կողմից կրկին ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրում հայտնաբերվել են անհամապատասխանություններ և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.05.2021թ. թիվ 26/26-1/6757-2021 գրությունը, «Երքաղլույս» ՓԲԸ-ի 23.04.2021թ. թիվ 68/554 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացված դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) ***40-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:*** Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: ***Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ,*** եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները):

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում, Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպես, «Երքաղլույս» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար լուսատեխնիկական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔԼ-ԲՄԱՊՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.04.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը info@shavadoon.co էլ. փոստի միջոցով 15.04.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ բանակցությունների անցկացման համար ծանուցվել է նաև «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչը:

Նույն արձանագրության 1.1 ենթակետի համաձայն՝ «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցչի կողմից գնային առաջարկները թողնվել են անփոփոխ:

Նույն արձանագրության 3.1 ենթակետի համաձայն՝ «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի կողմից կրկին ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրում հայտնաբերվել են անհամապատասխանություններ և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և կարգով հստակ սահմանված են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի և քարտուղարի գործողությունների հաջորդականությունը և ժամկետային սահմանափակումները, որոնք իրենց հերթին հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետը հստակ սահմանում է, որ, եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում ***արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ

հանձնաժողովի քարտուղարը ***նույն օրը*** դրա մասին էլեկտրոնային եղանակով ***ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը,*** իսկ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը չի շտկում արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է անբավարար և մերժվում***:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ***ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ***:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***19.04.2021թ. «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցչի մասնակցությամբ անցակցրել է գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ, 1.1 ենթակետով արձանագրել է, որ «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցչի կողմից գնային առաջարկները թողնվել են անփոփոխ, հետո միայն, այն է՝ 3.1 ենթակետով արձանագրել է, որ «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղի կողմից կրկին ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրում հայտնաբերվել են անհամապատասխանություններ և որոշում կայացրել Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ, մինչդեռ, ինչպես արդեն վերը նշվեց, իրավական ակտով հստակ սահմանվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները փուլ առ փուլ, այն է՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նախևառաջ պետք է արձանագրեր Ընկերության կողմից ներկայացված շտկված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները, որոշում կայացներ Ընկերության հայտը մերժելու կամ բավարար գնահատելու վերաբերյալ, այնուհետև նոր միայն ոչ գնային պայմանները բավարար գնահատված մասնակիցներին հրավիրեր գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:***

Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված Ընթացակարգի իրականացման գործընթացը, որի պայմաններում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով չի կարող վրա հասնել Ընկերության համար անբարենպաստ հետևանքներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.05.2021թ. թիվ 26/26-1/6757-2021 գրությամբ «Շավադուն» ՓԲԸ-ի Հայաստանյան մասնաճյուղին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**